ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1932-1994

«…Ճանաչողները կվկայեն, որ Վարդգես Պետրոսյանը իր ողջ հոգեկերտվածքով, էությամբ ու կոչումով զինվոր էր: Եվ ինչպես բոլոր ռազմադաշտերում է, կորուստներ էր ունենում և վիրավորվում էր, երբեմն թվում էր նույնիսկ մահացու, սակայն չէր նահանջում, չէր թողնում դիրքերը, որովհետև հավատում ու իր հավատի համար էր կռվում, հավատում էր, որ երկրի ու ժողովրդի համար հոգևոր տարածքների պաշտպանությունը նույնքան կարևոր է, որքան երկրի սահմանների պաշտպանությունը»:

Սամվել Կոսյան
«Գրական թերթ», ապրիլ, 2004 թ.

«Գրող, որը ծնվեց, հասակ առավ եւ ապրեց սովետական տարիներում, սնվեց ու գործեց այդ գաղափարախոսությամբ, սակայն իր տաղանդն ու ողջ էությունը նվիրեց հայապահպանմանը, հայ մշակույթի զարգացմանն ու տարածմանը, հայ ոգին հատկապես երիտասարդության մեջ ամրապնդելու, ցեղասպանության թողած հետեւանքների եւ հայ էությունը վերլուծելու, այն արժէվորելու ջանքերով: Գրող, որը մեր սերունդի երիտասարդության անուշադրության մատնված հոգեբանությունը ուշադրության կենտրոն դարձրեց, «Դեղատուն Անի», «Քաղաքի Կիսաբաց Լուսամուտները», «Վերջին Ուսուցիչը» իր հրաշալի գործերով: Առաջին անգամ լինելով՝ ազդարարեց մեր գյուղերի դիմագծի ոչնչացման ճակատագրի ցավալի վիճակը «Մենավոր Ընկուզենի» իր հրաշալի պատմվածքում, որը հետո նաեւ կինոժապավենի վերածվեց: Գրեց նույնքան հետաքրքիր թատերգություններ՝ «Ծանր է Հիպոկրատի Գլխարկը», «Ապրած եւ չապրած տարիներ», «Հայկական Էսքիզներ», որոնք բեմադրվեցին եւ հասարակության սիրույն արժանացան»:

Մարի Ռոզ ԱԲՈՒՍԷՖՅԱՆ
14 Ապրիլ, 2019 թ.
Սան Ֆրանսիսկո

Առաջադրանքներ

1. Ինքնուրույն կամ դասընկերներիդ հետ ուսումնասիրիր գրողի ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, ցույց տուր գրողի, նրա ստեղծագործության ու ժամանակաշրջանի, միջավայրի աղերսները:
2. Ստեղծիր գրողի դիմանկարը՝ ըստ կենսագրական փաստերի և հուշագրության:
3. Գրողի մասին պատրաստիր սահիկաշար, տեսաֆիլմ կամ ձայներիզ ՝ օգտվելով համացանցի աղբյուրներից:

ՎԵՐՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Վիպակի սյուժեն ու կառուցվածքը

Առաջադրանքներ

1. Կարդա՛ «Վերջին ուսուցիչը» վիպակը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Հղումը՝ https://lib.mskh.am/images/books/Verjin-usucichy_V.Petrosyan.pdf
2. Համառոտ վերաշարադրիր բովանդակությունը:
3. Ներկայացրու, թե ինչ կառուցվածք ունի վիպակը, և ում անունից է զարգանում պատումը:
4. Ներկայացրու վիպակում արծարծված խնդիրները:
5. Ցույց տուր դիպաշարի զարգացման փուլերը:
6. Վերհիշիր, թե ինչպիսի *«մռայլ նախերգանքով սկսվեց առավոտը Մովսես Խորենացու անվան դպրոցում գարնանային սովորական մի օր»*, երբ *«Երկինքը մաքուր էր, բաց կապույտ մանուշակների գույնի: Կարելի էր հուսալ արևոտ, զնգուն ևս մի օր…»:*
7. Բանավոր վերաշարադրիր այն պատմություններից մեկը, որոնք սկսեցին վզվզալ *«դասասենյակներում միջանցիկ քամու պես»,* և որոնց հավաքական անունը, ըստ հեղինակի, *«դպրոցական բանահյուսություն է»:* Մեկնաբանիր, թե ինչ նկատի ունի հեղինակը՝ *«դպրոցական բանահյուսություն»* ասելով:
8. Մեկնաբանիր Վահան Մամյանի հետևյալ միտքը գրականության մասին. *«Գրականությունն առարկա չէ: Գրականություն անհնար է սովորեցնել: Ես դա չեմ համարում ուսուցչի խնդիրը»:* Քո տեսակետն արտահայտիր դրա վերաբերյալ:
9. Կարդա՛ երկխոսությունը և դատողությունն արա, թե արդյոք սերունդ այն ժամանակ իսկապես վատն էր, թե՞ դա «հայրեր և որդիներ» հավերժական թեմայի դրսևորումներից մեկն էր:

   «– Ոչ թե սերունդ է, այլ փասն անհայտով հավասարում,— հերթական սիգարետը վառելով, մռայլ ասաց Մարտին Դանիելյանը՝ մաթեմատիկայի դասատուն,— անլուծելի

խնդիր: Ասենք, ես, գոնե ինձ համար, այդ հավասարումը վաղուց լուծել եմ– քանորդում՝ զրո: Զրո:

— Ես քեզ հետ համաձայն չեմ, Մարտին,– Վարդան Անտոնյանն էր, որը 10-րդ «ա» դասարանում էր գրականություն դասավանդում,— չորս-հինգ հոգու օրինակով կարելի՞ է սերունդ ընդհանրացնել:— Անտոնյանը նաև դպրոցի արհկոմի նախագահն էր և այդ պահին՝ փոքր-ինչ վիրավորված, որ Վանունին իրեն չի կանչում, չի խորհրդակցում:— Թեպետ ասածիդ մեջ ճշմարտություն, իհարկե, կա»:

10. Կարդա՛ հատվածը: Որքանո՞վ ես համամիտ ես ուսուցիչների ասածներին: Պատասխանդ հիմնավորի՛ր:

«— Պայթուցիկ հասակ է,— իր միտքն էր ծամծմում Դանիելյանը,— ամեն խաչմերուկում պահակ պիտի կանգնեցնես: Նրանցից ամեն մեկի մեջ դանդաղ գործողության մի ռումբ կա: Չգիտես, թե երբ է պայթելու:

— Բարդ հասակ է,— ասաց շախմատ խաղացողներից մեկը, որի վիճակը խաղատախտակի վրա երևի խառն էր,— սրանց հետ կարելի է խաղալ միայն ձիու քայլով: — Գեղեցիկ հասակ է,— ասաց ավագ ջոկատավարը, որը ընդամենը մի տարի առաջ էր ավարտել նույն այս դպրոցը,— դուք պարզապես հին բանալիներով ուզում եք նոր դռներ բացել:— Հետո նա երևի հիշեց, որ այստեղ նստածները անցյալ տարի իր ուսուցիչներն էին ու փութաց ուղղել իր վրիպակը:— Ոչ բոլորը, խնդրում եմ ինձ ճիշտ հասկակաք»:

Վիպակի կերպարները

Առաջադրանքներ

1. Բնութագրի՛ր դպրոցի տնօրենին ու քիմիայի ուսուցչուհուն՝ խոսքդ հիմնավորելով վիպակից մեջբերված հատվածներով:
2. Բնութագրի՛ր Վահան Մամյանին՝ նաև հիմք ընդունելով.

✓ ուսուցչի հետ երկխոսությունը.

«—Դժվա՞ր դասարան է…

— Դժվա՞ր: Խենթերի և ստահակների…

— Խենթե՞ր: Վատ չէ: Ստահա՞կ… Չգիտեմ»:

✓ աշակերտներին տված խորհուրդը.

«Հեքիաթներ ունեցեք: Ձեր հեքիաթը: Ձեր էության ինչ-որ մասով ապրեք հեքիաթի մեջ...»:

3. Տեսակետ հայտնիր, թե արդյոք ճիշտ էր Մամյանն իր՝ «Վերջին ուսուցիչ չի լինում, Լուսիկ» պատասխանով՝ ուղղված աշակերտուհուն: Մտքերդ շարադրիր գրավոր, քննարկիր դասընկերներիդ հետ:
4. Բնութագրիր Արմենին, Վահանին, Լուսիկին ու Մարիին՝ մեջբերելով համապատասխան տողեր:
5. Կարծիք հայտնիր, թե ավարտական դասարանի բոլոր աշակերտներն ինչու էին որոշել մնալ նույն դասարանում:
6. Դասընկերներիդ հետ քննարկիր, թե իր որ հատկանիշներով Մամյանը կարողացավ գրավել աշակերտներին ու շահել նրանց վստահությունը: Մեր օրերում արդյոք արդիական է նման ուսուցչի կերպարը:

Վիպակի գաղափարը, լեզուն և ոճը

Առաջադրանքներ

1. Մեկնաբանիր վիպակի վերնագիրն ու ներկայացրու գաղափարը:
2. Դուրս գրիր քեզ ամենից շատ դուր եկած երեք միտք, հիմնավորիր ընտրությունդ:

Քննարկում

Դասընկերներով քննարկե՛ք, թե, ըստ ձեզ, ինչպիսին է այսօրվա սերունդը, արդյոք առավելություններ ունի՞ նախորդ սերնդի իր տարեկիցների համեմատ: Այսօր *հայրերի ու որդիների* թեման արդիակա՞ն է արդյոք: Հիմնավորե՛ք ձեր կարծիքները: